ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ



ՀՈՒՆՎԱՐ – ՄԱՐՏ

2017

# 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ

**ՏԱՑ ցուցանիշն ամենաբարձրն է 2014-2016թ.թ. հունվար-մարտի ՏԱՑ համեմատ: ՏԱՑ-ին դրական են նպաստել արդյունաբերության, առևտրի և ծառայությունների աճերը, բացասական՝ շինարարության և գյուղատնտեսության նվազումները:**

**Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ), հունվար-մարտ, %**

| | 2014 | 2015 | 2016 | 2017 |
|---|---|---|---|---|
| Հունվար-մարտը նախորդ տարվա հունվար-մարտի նկատմամբ | 3.9 | 2.8 | 6.1 | 6.6 |
| Մարտը նախորդ տարվա մարտի նկատմամբ | 4.8 | 2.1 | 6.9 | 6.7 |
| Մարտը փետրվարի նկատմամբ | 14.8 | 12.5 | 13.8 | 14.0 |

# 2. ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն, ինչպես վերջին տարիներին, այնպես էլ 2017թ. մյուս ենթաճյուղերի համեմատությամբ, ունի ամենաբարձր աճը:**

2015-2016թ.թ. **նվազման դիմաց առևտրի շրջանառության աճ է գրանցվել, ինչը պայմանավորված է նաև տրանսֆերտների ներհոսքի** 14.5% **աճով:**

**Արդյունաբերության բաժիններից հաշվետու ժամանակահատվածում առավելագույն աճ է գրանցվել մշակող արդյունաբերությունում** (21.4%)՝ 2016**թ. հունվար-մարտի** -0.5% **նվազման դիմաց:**

2017**թ հունվար-մարտի մշակող արդյունաբերության արտադրանքի «արտահանումն իրացման նկատմամբ» ցուցանիշն նախորդ** 3 **տարիների ցուցանիշի համեմատ էականորեն բարձր է:**

**Աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %**

| | 2014 Q1 | 2015 Q1 | 2016 Q1 | 2017 Q1 |
|---|---|---|---|---|
| Արդյունաբերական արտադրանք | -2.8 | 2.0 | 7.8 | 16.1 |
| Գյուղատնտեսական արտադրանք | 5.2 | 4.5 | 3.3 | -1.5 |
| Շինարարություն | 0.7 | 3.1 | -2.2 | -13.6 |
| Առևտրի շրջանառություն | 4.5 | -3.4 | -0.7 | 11.3 |
| Ծառայություններ | 3.5 | 3.9 | 10.4 | 10.0 |

**Արդյունաբերության բաժինների աճը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %**

| | 2014 Q1 | 2015 Q1 | 2016 Q1 | 2017 Q1 |
|---|---|---|---|---|
| Հանքագործական արդյունաբերություն | -1.1 | 27.7 | 27.7 | 13.8 |
| Մշակող արդյունաբերություն | -4.1 | 0.7 | -2.3 | 21.4 |
| Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում | -0.5 | -13.2 | 18.0 | 6.9 |
| Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում | 6.1 | 10.2 | 9.3 | 8.8 |

**Արդյունաբերության բաժինների արտադրանքի արտահանումն իրացման նկատմամբ, %**

| | 2014 Q1 | 2015 Q1 | 2016 Q1 | 2017 Q1 |
|---|---|---|---|---|
| Հանքագործական արդյունաբերություն | 68.1 | 75.2 | 86.9 | 70.5 |
| Մշակող արդյունաբերություն | 43.9 | 40.5 | 44.0 | 51.0 |
| Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում | 11.2 | 3.7 | 9.6 | 7.1 |

# 3. ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ



2016թ. 1-ին եռամսյակի նվազումների դիմաց 2017թ. 1-ին եռամսյակում աճ է գրանցվել սննդամթերքի արտադրության, դեղագործական արտադրանքի, հիմնային մետաղների արտադրության, պատրաստի մետաղական արտադրատեսակների համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների, պոլիգրաֆիական արտադրատեսակների գծով:

2016թ. 1-ին եռամսյակի համեմատ «արտահանումն իրացման նկատմամբ» ցուցանիշի ավելացում է գրանցվել մշակող արդյունաբերության հետևյալ ենթաճյուղերի գծով՝ խմիչքների արտադրություն՝ 14.6 տոկոսային կետ; ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակներ՝ 8.7; ծխախոտային արտադրատեսակներ՝ 6.9; դեղագործական արտադրանք՝ 6.7; հագուստի արտադրություն՝ 3.8; էլեկտրական սարքավորանքի արտադրություն՝ 3.2; սննդամթերքի արտադրություն՝ 1.7:

Մշակող արդյունաբերության արտահանումը կազմել է ընդհանուր արդյունաբերության արտահանման 66.6%, 2016թ. հունվար-մարտի նկատմամբ ավելանալով 7.5 տոկոսային կետով:

**Մշակող արդյունաբերությունը գործունեության տեսակներով (ըստ տեսակարար կշռի նվազման), 2017թ. հունվար-մարտ**

| | Արտադրանքի ծավալ, մլրդ դրամ | Աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ % | Կառուցվածք, % | Մշակող արդյունաբերության աճին նպաստման չափ, % | Արտահանումն իրացման նկատմամբ, % |
|---|---|---|---|---|---|
| Մշակող արդյունաբերություն | 202.2 | 21.4 | 100.0 | - | 51.0 |
| Սննդամթերքի արտադրություն | 59.1 | 8.2 | 29.2 | 2.7 | 6.9 |
| Հիմնային մետաղների արտադ. | 41.3 | 32.3 | 20.4 | 5.9 | 84.6 |
| Խմիչքների արտադրություն | 28.1 | 43.6 | 13.9 | 5.0 | 73.8 |
| Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն | 32.1 | 4.8 | 15.9 | 0.9 | 80.0 |
| Արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում | 12.4 | 157.1 | 6.1 | 4.5 | 96.7 |
| Ռետինե և պլաստմասսայե արտադրատ. արտադրություն | 4.6 | 11.8 | 2.3 | 0.3 | 15.3 |
| Այլ ոչ մետաղական հանքային արտադրատ.արտադրություն | 4.4 | -5.3 | 2.2 | -0.2 | 18.5 |
| Թղթի և թղթե արտադրատես. արտադրություն | 4.4 | 2.2 | 2.2 | 0.1 | 0.0 |
| Դեղագործական արտադրանքի արտադրություն | 2.3 | 32.4 | 1.2 | 0.3 | 60.6 |
| Հագուստի արտադրություն | 2.4 | 4.8 | 1.2 | 0.1 | 62.2 |
| Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում | 2.3 | 37.1 | 1.1 | 0.4 | 2.0 |
| Էլեկտր. սարք. արտադրություն | 2.1 | 204.2 | 1.1 | 0.7 | 25.0 |
| Քիմիական նյութերի և քիմ արտադրատ. արտադրություն | 1.6 | -1.6 | 0.8 | 0.0 | 4.5 |
| Պատրաստի մետաղական արտադր. արտադրություն | 1.7 | 13.4 | 0.8 | 0.1 | 0.4 |
| Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկ. սարք. արտադ | 1.7 | 93.4 | 0.8 | 0.5 | 39.3 |
| Կահույքի արտադրություն | 0.6 | 24.9 | 0.3 | 0.1 | 9.0 |
| Այլ | 1.0 | 2.2 | 0.5 | -0.1 | 6.3 |

**Մշակող արդյունաբերության արտահանումը ընդհանուր արդյունաբերության արտահանման մեջ, %**



# 4. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2015թ. և 2016թ. 1-ին եռամսյակների նվազման դիմաց 2017թ. 1-ին եռամսյակում գրանցվել է առևտրի շրջանառության աճ: Մանրածախ առևտրի աճը կազմել է 5.1%, մեծածախ առևտրինը՝ 17.0%, իսկ ավտոմեքենաների առևտրինը՝ 54.3%:

Ծառայությունների բոլոր տեսակների գծով աճ է գրանցվել:

Կառուցվածքում շարունակում է գերակշռել ֆինանսական և ապահովագրական ծառայությունը:

2014թ. 1-ին եռամսյակի համեմատ 2017թ. 1-ին եռամսյակում ավելի քան 13.5 տոկոսային կետով ավելացել է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ծառայության տեսակի տեսակարար կշիռը:

Ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում ժամանող զբոսաշրջիկների քանակն աճել է 18.2%-ով:

ՏՀՏ ոլորտում 2014-2016թ.թ. համեմատ 1-ին եռամսյակում կրկնակի աճի տեմպ է գրանցվել արտադրության և առևտրի գծով:

**Առևտրի շրջանառության աճ, հունվար-մարտ, %**




**Առևտրի շրջանառության կառուցվածք, հունվար-մարտ, %**




**Ծառայությունների ծավալի աճ, հունվար-մարտ, %**




**Ծառայությունների կառուցվածք, հունվար-մարտ, %**




**Միջազգային զբոսաշրջություն**

| | 2014 Q1 | 2015 Q1 | 2016 Q1 | 2017 Q1 |
|---|---|---|---|---|
| **Ժամանողների թվաքանակ, հազ. մարդ** | 242.4 | 232.6 | 252.5 | 298.5 |
| **Աճը նախորդ տարվա 1-ին եռամսյակի նկատմամբ** | 20.5 | -4.0 | 8.6 | 18.2 |
| **Մեկնողների թվաքանակ, հազ.մարդ** | 224.1 | 214.8 | 227.5 | 266.3 |
| **Աճը նախորդ տարվա 1-ին եռամսյակի նկատմամբ** | 18.2 | -4.1 | 5.9 | 17.0 |

**ՏՀՏ ոլորտ, ծավալ, մլրդ դրամ/աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %**

| | 2014 Q1 | | 2015 Q1 | | 2016 Q1 | | 2017 Q1 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ՏՀՏ, այդ թվում՝** | 54.4 | 3.0 | 51.0 | -7.2 | 52.0 | 1.7 | 53.0 | 15.5 |
| **արտադրություն** | 0.5 | 59.2 | 0.5 | -0.8 | 0.3 | -47.7 | 0.3 | 140.3 |
| **առևտուր** | 7.1 | 16.4 | 6.5 | -12.1 | 5.2 | -20.8 | 5.2 | 118.5 |
| **ծառայություններ, որից՝** | 46.8 | 0.9 | 44.1 | -6.5 | 46.6 | 5.5 | 47.6 | 3.7 |
| **հեռահաղորդակցություն** | 39.7 | 0.9 | 35.9 | -9.6 | 35.1 | -1.5 | 35.1 | -9.1 |

# 5. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

2015-2017թթ. և՛ առևտրաշրջանառության, և՛ արտահանման անվանական ծավալները դինամիկայում աճում են, սակայն 2017թ. առևտրաշրջանառությունը չի գերազանցում 2014թ. համապատասխան ցուցանիշին: 2017թ. գրանցվել է առևտրաշրջանառության և ներմուծման վերջին 4 տարիների ամենաբարձր աճը:

Ըստ ԱՏԳ դասակարգման արտահանման կառուցվածքում գերակշռել են հետևյալ ապրանքախմբերը՝
- «հանքահումքային արտադրանք»՝ 29.2%,
- «պատրաստի սննդի արտադրանք»՝ 24.6%, «թանկարժեք, և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղ. և դրանցից իրեր»՝ 16.2 %,
- «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»՝ 14.0%:

Ներմուծման կառուցվածքում գերակշռել են՝
- «հանքահումքային արտադրանք»՝ 21.1%,
- «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ»՝ 12.4%,
- «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք»՝ 9.3%:

2014թ. 1-ին եռամսյակի համեմատ 2017թ. 1-ին եռամսյակում դեպի ներկայիս ԵԱՏՄ երկներ արտահանման մասնաբաժինն ավելացել է 3.3 տոկոսային կետով, իսկ ներմուծումը՝ 6.2 տոկոսային կետով:

**Արտաքին առևտրի ծավալ, մլն ԱՄՆ դոլար**

| | 2014 Q1 | 2015 Q1 | 2016 Q1 | 2017 Q1 |
|---|---|---|---|---|
| Արտաքին առևտրաշրջանառություն | 1322.5 | 1036.3 | 1062.2 | 1246.8 |
| Արտահանում | 348.0 | 297.6 | 380.4 | 443.1 |
| Ներմուծում | 974.5 | 738.7 | 681.8 | 803.7 |
| Հաշվեկշիռ | -626.5 | -441.1 | -301.4 | -360.6 |

**Աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %**

| | 2014 Q1 | 2015 Q1 | 2016 Q1 | 2017 Q1 |
|---|---|---|---|---|
| Արտաքին առևտրաշրջանառություն | 0.6 | -21.8 | 3.3 | 17.4 |
| Արտահանում | 1.8 | -16.2 | 27.1 | 16.5 |
| Ներմուծում | 0.2 | -23.8 | -6.5 | 17.9 |

**Արտահանման կառուցվածք, %**



**Ներմուծման կառուցվածք, %**



**Արտահանման կառուցվածքն ըստ երկրների, հունվար-մարտ, %**




**Ներմուծման կառուցվածքն ըստ երկրների, հունվար-մարտ, %**




Ռուսաստանի Դաշնություն
Իրանի Իսլամական Հանրապետություն
Իրաք
ԵՄ ԵՐԿՐՆԵՐ
Չինաստան
Այլ երկրներ